Ջրվէժը 45 մետր լայնութեամբ եւ 70 մետր բարձրութեամբ ջրերը վիժում են ապառաժ-ների վրայ ահեղ գոչերով, իրար վրայ երեք աստիճանի ջրվէժ են կազմում մինչեւ Թեւին խառնուելը: Ջրվէժի բարձրացած շառաչիւնը քսան կիլոմետր հեռաւորութեան վրայ լսուում է: Աչխարհի ամենագեղեցիկ ջրընկեցներից մէկն է. բայց ճանապարհների բացակայութեան եւ երկրի անմատչելիութեան չնորհիւ՝ այցելուներ չունի:

Թեւ առուակին միանալով, իր նախկին հունը տեղաւորուելուց յետոյ, սրընթաց ահեղ մոնչիւններով առաջ է գնում դէպի հիւսիս. աջից ընդունում է՝ Մեշենիկ, Ատմեկ, Երգենց, Ճոգունջուր առուակները. իսկ ձախից՝ Ուզէյն, Կիրվենց, Բարվանի, Գեճիք բերդ եւ Աշմուշէն բերդի առուակները, որոնք ոռոգում են համանուն գեղերի հանդերը, եայլաները, ձմեռոցները, մացրանները, ախոռները, վանքերն ու աւերակ բերդերը: Ապա Թորդումը միանում է Օլթի վտակին եւ միասին ուղղուում են հիւսիս-արեւմուտք, միախառնուում Ճորոխին: Թորդում վտակի կենդրոնական հիւղը 105 վերստ երկարութիւն ունի: